

3328

3
44

Հրատարակութիւն Գ. Գալստեանի Ն 52

Լ. Ա Ղ Ա Յ Ե Ա Ն

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ

ԲԵՆԵՐՈՐ ԴԱԼԵՎԱՏՐԵՎՈՏՈՒԹԵՅՆ ՄԱՍԻՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ տպագրութիւն

491.99-1

W - 44

Թիֆլիս

Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Հնկ., Վելեմինովսկ. № 18

1910

1.	Պօմպէյի վերջին օրերը, Յ.	Միրզայեանի	— 1	50		
2.	Ասպետ, Վ.	Փափազեանի	—	15		
3.	Կեանքը ծովերի խորքում, 50 պատկերով Լուս-	կելիչի, թարգմ.	Ստ.	Մալխասեանի	— 30	
4.	Տրիլիի, գրամա 4 ար., թ.	Լ.	Մելիք-Աղամ.	— 25		
5.	Եազ-աստ, գոդ. 1 արար. Յ.	Ղազարեանի	— 25			
6.	Դարվինիզմ, Դարվինի պատկերով Ս.	Բալտ-	ղեանի	— 50		
7.	Ազնի գող, Ֆ.	Մ.	Դոստոեվսկու, թ.	Ն.	Զ.	— 10
8.	Խնդրավարութիւն և Զեմստվօ, Բէլօկոնսկու,	թարմ.	Կ.	Զալալեանի	— 15	
9.	Տնտեսագիտական գրոյցներ, Կարիշմի, թարգմ.	Կ.	Զալալեանի	— 40		
10.	Էլ վաճենու առաջնական գործութիւններ, Տարբեանի, թարգմ.	Կ.	Զալալեանի	— 20		
11.	Քերականութիւն մայրենի լեզուի, Ա.	Բ.	և	Գ. մաս միասին. Ստ.	Պալասանեանի	— 75
12.	Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վինօգրադո-	վի,	թարգմ.	Գ.	Խաժակի	— 1
13.	Երոպա և Հայաստան, Ամֆիտէատրօվի	թարգմ.	Ա.	Միթթարեանի	— 10	
14.	Փուչ զաւակ, գրամա 5 գործ. Գ.	Ղարաջնանի.	— 50			
15.	Արինի աւետարանը, թարգմ. Տ.	Զաւէնի	— 25			
16.	Գծագրութեան օրինակներ, Գ.	Լեռնեանի	Ա.	մաս.	— 20	
17.	Բ.	մաս.	—	—	— 20	
18.	Գ.	մաս.	—	—	— 35	
19.	Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան,	քաղաքական մաս, Կազմեց Լ.	Բարայեան	— 65		
20.	Նачальная книжка для армян. ШКОЛЬ.	С. Мандянյան	—	—	— 55	
21.	Կառապան Հենշէլ, թարգմ. Լ.	Բարայեան	—	—	— 50	
22.	Հող և նրա մշակութիւնը, Գ.	Ղազարեանի	—	—	— 20	
23.	Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան,	Երօպա. Կազմեց Լ.	Բարայեան	—	— 50	

491.99-1

Ա-44

Հրատարակութիւն Գ. Գալունեանի և 52

2304-10

Գ. ԵԼԱՅԵԱՆ


ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ

ԲԵՆԱԿԱՐ ՆԵԽԱԳԱՏՐԵՍՈՒԹԵՍ ՄԱՍԻՆ

ԴԱՎՈՒՅՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ ՄՊԱՋՐՈՒԹԻՒՆ



Թիֆլիս

Տպարան «ԿՈՒՏՈՒՐԱ» Բնկ., Վելեմինովսկ. № 18

1910

6.02.2013

ՏԵՇԱ ՊՐԻՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՎԱՑՎՈՍԴՈ

Սրա առաջին տպագրութիւնը եղել է «Նոր
Դպրոցի» 1910 թվի մայիսի համարում.

ԽԱՅԱՎՈՐԱԿԱՆ ՊՐԻՋԱԿԱՆ



3296-91

81

իս պահ դր բար պատճեն թափառ
ամեն և պահանձ պահանձ ու նախըն
տակ և ուսումնական ու նախըն

1

Սովորեցնել մանուկին գրել-կարդալ, ա-
ռանց հասկացնելու նրան այդ գործի էռ-
թիւնը, կընշանակէ մի բան տալ նրան, ա-
ռանց տաձի երեսը ցոյց տալու:

Ոչ այդպէս ըսպիտի լինի, այլ ամեն
ինչ, որ տրում է երեխային, նա պէտք է
տեսնէ նրան աչքովը, եթէ աչք ունի, լսէ
ականջովը, եթէ զուրկ չէ լսողութիւնից:
(Կոյրերի և խուլ ու համրերի համար սով-
որեցնելու ջոկ եղանակներ կան):

Երեխայի տեսածն ու լսածը պէտք է
լինի իսկականը և ոչ մի կեղծիք, ինչպիսիք
են գծերն ու կէտերը՝ բառերի և տառերի
փոխարէն: Ուսուցումը պէտք է լինի զննա-
կան, գիտակցական և պարզ, որ հասկանա-
լի լինի:

2

Թէպէտ ուղիղ է առած, թէ ուսուցումը
պէտք է տանել հեշտից գէպի գժւարը, բայց
առելի էլ ուղիղ կըլինի ասել՝ թէ ուսուց-
ման համար ինչ որ դժւար է, պէտք է հեշ-
տացնել: Օրինակ առելի հեշտ է գրել ու տա-
ռու քան թէ պի, բայց երբ սովորեցնում են
պէտք արմատական գծերը, համեմատա-
կան գժւարութիւնը վերանում է: Առելի
հեշտ է գրել միավանկ սար բառը, քան ե-

ռավանկ Սանասար, բայց երբ նախ սովորեցնում են բառերի վանկելը, և գրելիս՝ մանուկը վանկում է Սահասար, էլ այնուհետև դժւարութեան մասին խօսք լինել չի կարող:

Եթէ կարծում էք, որ հասարակ տառեր գրելն աւելի հեշտ է, քան թէ գլխատառերը, պէտք է գրանց գրելն այնպէս հեշտացնէք, որ այլիս առիթ չունենանք գրանց գրելը յետաձգելու:

Եթէ միավանկ բառերը աւելի հեշտ են կարդում, քան բազմավանկները, պէտք է սովորեցնել, թէ ինչպէս պէտք է բառի սկզբի երկու և երեք տառերն իրար հետ միացնել:

Բայց այս բոլոր հեշտացնող ձևերը աւելի կը հետանան, երբ գրել-կարդալը գրաւոր սկսելուց առաջ մանուկներն ստացած կը լին բանաւոր նախապատրաստութիւն:

3

Բանաւոր նախապատրաստութեան ժամանակ, երբ սկսում են բառերը վանկել և վանկերը վերածել հնչիւնների, դրանով հիմք է դրւում, թէ ինչպէս պէտք է գրել. իսկ երբ լուծած վանկերը նորից համադրւում են, դրանով էլ սովորեցնում են, թէ ինչպէս պէտք է կարդալ: Այսպիսով գրել-կարդալը դառնում է գիտակցական: Մանուկները ոչ թէ այսօր այս գիրն են սովորում և վազը միւս, այլ սովորում են գրերի նշանակու-

թիւնը, նրանց պատկեր լինելը այս ու այն հնչիւնի: Այսպէս են պատրաստում, որ իւրենք կարող են նոր գրեր հնարել միայն՝ ուսուցչի օգնութեամբ. Ճանօթանում են արդէն կզած գրերի հետ¹⁾: մաժաման մասն վիճակը բայց ուստի ուսումնական վիճակը ամբողջութեամբ առաջանաւ է:

Ուսումնարան մանուղ ութիւնարեկան հերթէքը, եթէ քաղաքացի են, դժւար կը պատահի, որ քիչումիշ կարդալ չիմանան, համբերել չըգիտենան, չըլինին ճանաչելիս թւանշանները, տեսած չըլինին սովորական լուսոի թղթերը, փորձած չըլինին կարդալ այս ու այն խանութիւն ցուցանակը՝ թէկուզ օտար գրերով ու չըլինին իմանալիս «կօնչինա» ասւած թղթախաղը, որով սովորում են գումարում անելը:

Երբ տանը կան դպրոց յաճախող մեծ քոյլեր և եղբայրներ, նրանցից փոքրերը չորս ու հինգ տարեկանից արդէն սկսում են նկարել, կարդալ, գրել, հաշել, ծնողները սկզբում բանի տեղ չեն դնում մանուկների այդ ազատ պարագաները, բայց երբ նկատում են նրանց առաջադիմութիւնը, կարգէ դուրս էակներ են համարում նրանց, մինչդեռ դա մի սովորական

¹⁾ Գրագիտաթիւն ուսուցանելու այս եղանակը ընդունած է անւանել «վերլուծական», տարբերելով «հնչական-բաղադրականից», որին այլև հետեւդ ընկար:

երեսոյթ է, և այդպէս էլ պիտի լինի բնականապէս: Գրագէտ և գրասէր ծնողների զաւակները չեն կարող անգրագէտ մնալ մինչեւ ութ տարեկան դառնալը: Ժամանակով՝ միայն մանկական ծաղկոցները կընդունեն անգրագէտ մանուկներ, իսկ դպրոցների նախակրթարանները անգրագէտ մանուկի երես չեն տեսնիլ:

Այլ պայմանի տակ են գտնւում գիւղի երեխները: Մի գիւղում, ուր գեռ նոր է դպրոց բացւում, այնտեղի մանուկները քաղաքի երեխայի պէս նախապատրաստած չեն լինում. շատերը նոյնիսկ ըմբոստանում են, «անցաւ գլուխները ցաւի մէջ գցել չեն ուզում»: Օրինակ ունենալով իրենց անգրագէտ ծնողներին և ուրիշներին, լաւ են համարում իրենք էլ անգրագէտ մնալ և իրենց տաւարի ու ոչխարի ետևից գնալ սար ու ձոր, սառն աղբիւրների մօտ արձակ-համարձակ պտըտել: Բայց նոր հանգամանքի առջև ընկածողները իրենց ընդունակութիւնովը յետ չեն մնում քաղաքի երեխաներից: Գըտըրներով բնութեան ծոցում՝ հարուստ սընունդ են ստանում նրանից, իսկ իրենց առոյգութիւնը և փիզիքագէտ աւելի զարգանալը մի մեծ առաւելութիւն է տալիս աւելի ծանր պարապմունք տանելու, քան թէ քաղաքի մանուկը: Ուզում եմ ասել, թէ ուսումն սկսող ութ տարեկան մանուկները բաւական հասունացած են լինում ու սուցչին լաւ ըմբռնելու, եթէ ուսուցիչն էլ

լաւ է հասկանում նրանց և ճանաչում նըրանց մէջ թաքնած ու քնած ընդունակութիւնները և գիտէ զարթեցնել և դուրս քաշել նրանց:

Մինչեւ այստեղ ինչ որ ասկցինք, մի համառօտ տեսութիւն էր միայն, մի ներածութիւն մեր անելիքի մասին: Այժմ պիտի խօսնք գործնականի մասին:

Գրել-կարդալը զննական անելու համար խօսք ու զբոյց անելիս՝ կարելի չէ փախուստ տալ կարեռ տերմիններ գործ ածելուց, ինչպիսիք են՝ գիծ, բառ, վանկ, հնչիւն, գիր:

Խօսել գրերի մասին առանց նրանց անունը տալու, այդ կընշանակէ չըխօսականութիւն անել, և ինչ որ պէտք է ասել լեզով, ձեռք ու գլխով յայտնել և պատասխանել տւած հարցումներին:

Ամենքս էլ ընդունում ենք, որ գրելն առաջ է կարդալուց, որ առաջ պէտք է գըրեն և ապա կարդան իրանց գրածը: Բայց ինչպէս կարող են գրել, մինչև չիմանան գրերի գոնէ տարբական գծերը: Ասածդդինչպէս կարող են գրի առնել, մինչև չիմանան նրա հնչիւնական կազմը: Սրա համար էլ ահա մի բանաւոր նախապատրաստութեամբ մի կողմից սովորում են գրել գրերի արմատական գծերը, միւս կողմից՝

առվորում են բառերը վանկել և վանկերը
վիրածել տառերի:

Թէ ինչպէս պէտք է բառերը վերածել
վանկերի, դա արդէն ներկայումս տարած-
ւած սովորութիւն է և ծանօթ ամենքին, ու-
րեմն այստեղ չարժէ դրա վրայ կանգ առ-
նել: Այլ է վանկերի լուծումը, քանի որ
կան ասողներ, թէ վանկի մէջ բաղաձայնը
ձայնաւորից պէտք չէ զատել, թէ բաղա-
ձայնը իր հնչական անունը չըպիտի ունե-
նայ, քանի որ նա առանց ծայնաւորի օգ-
նութեան չի հնչում:

Սա մի այնպիսի թիւրիմացութիւն է,
որի պարզաբանելը դիւրին չի լինի, եթէ
լսողները լաւ ըմբռնելու և հասկանալու յօ-
ժարութիւն և արամագրութիւն ցոյց չըտան:

Ես այս յօգւածը վերնազրել եմ «Հայերէն
գրագիտութիւն...»: Միթէ գրագիտութիւն
ուսուցանելու եղանակը միենոյնը չէ, ինչ
լեզու ուզում է լինի: Ո՛չ, միենոյն չէ: Զի-
նարէնում բառագանկութիւն չի կարող լի-
նել, որովհետեւ նրանք հնչիւնական գրեր
չունին, այլ միայն բառանըշաններ, որոնց
թիւը ներկայումս, ինչպէս ասում են, յի-
սուն հազարից անցնում է: Անզլիացիք հըն-
չիւնական տառեր ունին, բայց իրանց բա-
ռերն այնպէս են խճողւած համբ տառերով
որ արդէն անեկոտ է կաղմւել, թէ գրում
են՝ «բարի լոյս» և կարդում՝ «Աստծու բա-
րին»: Մասնց բառերը նոյնպէս անյարմար
են վանկելու, և կամայ ակամայ պէտք է

սովորեն բառերն ամբողջապէս, որ ամբող-
ջի պատկերը գրոշմւի սովորողների յիշողու-
թեան մէջ ¹⁾): Կան լեզուներ էլ, որոնք և
վանկելու են յարմար, և վանկերը տառերի
վերածելու, բայց բաղաձայնը իրանց որևէ
ձայնաւորի օժանդակութեամբ հնչելը ան-
յարմարութիւն է առաջ բերում:

Մեր բառազրութիւնը ամենապարզ հըն-
չական լինելով, ոչ միայն բառալուծութեան
և վանկալուծութեան է յարմար, այլ և
ունի մի այնպիսի տառ, որի օգնութեամբ
մեր ամեն մի բաղաձայնը կարող է հնչել
ամենայն յարմարութեամբ: Այդ տառը կար-
ծես հէնց նրա համար լինի հնարևած, որ իր
օգնութեամբ հնար լինի հնչել բաղաձայն
տառերը:

Ես այդ տառի անունը չեմ տալ թող նա
ինքն իրան երեայ: Ենթազրենք մի բոպէ,
որ մինք ամեն մի բաղաձայն հնչում ենք
ա հնչիւնի օժանդակութեամբ, —ընին ա-
սում ենք բառ, գիմին՝ զա, և այլն: Այդ
գէպօւմ երեխան ինչպէս կըկարդայ՝ բնակը
սբաի, եթէ ոչ՝ բանակ, սարտի: Եթէ ա-ի
տել լինէր ու, կըկարդային բունակ, սուր-
տի: Եթէ լինէր օ, կըկարդային բօնակ, սօր-
տի: Իսկ եթէ լինէր լ՝, բնակը կըդառնար

¹⁾) Մի քանի անգամ ականջովս է ընկել, թէ
գրագիտութիւն սովորեցնելու ամենալաւ եղանակը ա-
մերիկանն է, այսինքն՝ անզլիականը: Այսպէս ա-
նողները ամաչում են իրանց ասածն ապացուցող մի
յօգւած տալ, թէկ խօստանում են:

բընակ, սրտին՝ սըրտի, որ կընշանակէ՛ երկուսն էլ կըմնային անփոփոխ՝ բնակ և սրտի: Ուրիշ օրինակ, գրում ենք՝ կըկնել, քրտնքել, քրթմնջել և կըրկնել, քըրտընքել, քըրթմընջել: Միթէ սրանով փոխւեց բառը: Այս կընշանակէ ը տառը երկու բաղաձայնի մէջ եղած թէ չեղած՝ միհնոյն է, իսկ այդ յատկութիւնը չունի ոչ մի այլ ձայնաւոր: Գրեցէք սիրել և զեղչեցէք ձայնաւորները, տեղը կըմնայ՝ սրլունշանակութիւնից զուրկ հնչիւն:

Ուսումնասիրելով ինքնուսոյց սովորողներին, տեսնում ենք, որ նրանք էլ բաղաձայնները ուրիշ ձայնաւորի օժանդակութեամբ չեն հնչում, այլ բացառապէս ը հընչիւնի: Այսպիսի յատկութիւնն ունեցող տառչըկայ ոչ մի լեզում, սա զուտ հայկական է, ինչպէս երեսում է և մեր չը, կը, մը բառութից: Բացի այս յատկութիւնից՝ սա ունի և որոշիչ յատկութիւն, որ զրուում է բոլոր բաղաձայնավերջ բառերի վերջում, ինչպէս՝ աչք, աչքը, քար, քարը, ջուր, ջուրը, և բուրն էլ այսպէս:

Օգուտ քաղելով ը հնչիւնի որոշիչ յատկութիւնից, նախ քան վանկերը տառերի վերածելը սովորեցնում ենք ը տառի այս յատկութիւնը և ցոյց ենք տալիս իր պատկերը, իբրև զննելի առարկայ և իբրև մի զործիք, որ պիտի գործ ածենք զրել-կարդալիս:

Բաղաձայնների հնչական անւանաւութեան հակառակորդները խօսքով են միայն հակառակում և վիճում, իսկ երբ հարկա-

դըրւած են լինում թիւագրել մի բան, որ աշակերտները զրեն կամ շարեն շարժական տառերով, այն ժամանակ գգում են, որ իրանք մի երկաթ են ուզում կռել, առանց սալի ու մուրճի:

6

Երբ երեխէքը գիտեն արդէն բառերը ուղիղ վանկել, և մնում է, որ վանկերն էլ վերածեն տառերի, ահա այդ ժամանակ ուսուցիչը հասկացնում է, որ բոլոր բառերը երկու կերպ են ասւում՝ ը-ով և առանց ը-ի, ինչպէս՝ տուն, տունը, Արշակ, Արշակը: Թիւագրում է մանուկներին, որ այս ու այն առարկայի անունը ասեն ը-ով և առանց ը-ի: Երբ այնքան վարժում են, որ իրանց համար հասկանալի է դառնում, որ ը-ն մի առանձին հնչիւն է և կարելի է մի բառի վերջից աւելացնել և զեղչել, այդ ժամանակ ուսուցիչը զրում է գրատախտակի վրայ ը տառը և բոլորին միասին հնչել տալիս: Որպէսզի ը-ն իրու գիր մենակ չըմնայ, ուսուցիչը՝ իրըև պատկեր՝ ցոյց է տալիս ամբողջ այբուբենի թերթը, և թէ կայ դպրոցում, իսկ եթէ չըկայ, ինքը զրում է գրատախտակի վրայ նախ ձայնաւորները և ապա մի քանի բաղաձայններ, որ կարգում է ը-ի օժանդակութիւնը:

Այս դասի ժամանակ ուսուցիչը վերասուլութեան է ինթարկում աշակերտներին, որ տեսնէ՝ կմն արդեօք մէջները գրագէտ-

ներ, և քանի հոգի են, որոնք ճանաչում են բոլոր գրերը, քանիսը՝ կիսատ-պոտ և քանիսը բոլորովին չըգիտցող: Եթէ լինում են այսպիսիք, գրանց ջոկ-ջոկ խմբերի է բաժանում, որ ուշադրութիւնը աւելի չըգիտցողների վրայ գտածնէ և աշխատէ շուտ միացնել գիտցողների հետ:

Բառերի վերջից ը հնչիւնը աւելացնելն ու զեղչելը կարողանալուց յետոյ ձեռք է զարկում երկտառ նշանակած վանկերի լուծ ման: Վանկերն սկսում են ճայնաւորով և վերջանում բաղաձայնով, որ հնչում է ը հնչիւնի օֆանդակութեամբ: Այդ միավանկ բառերն են՝ ախ, ակ, ահ, աղ, աջ, առ, ափ, եզ, ետ, եմ, եկ, եփ, էս, էղ, էն, էշ, էծ, էլ, էհ, էր, իժ, իմ, իք, ութ, ուժ, ուլ, ում, ուշ, ուս, ուր, օդ, օղ, օր, օձ, օվ:

Նախ ինքը ուսացիչը տալիս է ճայնաւորի և բաղաձայնի անունները, ամելով բարձրաձայն՝ ա, իւր, և պատիրում երեխաներին, որ պատասխանեն առանց ը-ի՝ ախ: Այսպէս և միւսները:

Ուսուցիչը հանդիսանում է իրեկ գրող, իսկ մանուկները՝ իրեկ կարդացող: Ուսուցիչն ասում է՝ եթէ ես գրեմ գրատախակի վրայ աւ և դը, գուք ինչ կըկարդաք: Պատասխանում են՝ ան՝ աղ... Ուսուցիչը իրօք գրում է աղ, և երեխեքը տեսնում են, որ աղ գրելու համար երկու գիր է եղել պէտք՝ աւ և դը: Այսպէս անա և միւս վանկերը: Այստեղ գրելու նպատակը այն չէ, որ երեխեքը ճանաչեն

գրերը, այլ իրեկ մի ճայնանիշ՝ որ փոխանակ գիծ կամ կէտ լինելու, կարող է իսկական տառը լինել, որ կարող է ճանօթ լինել և մանուկներից շատերին: Ուսուցիչը գրելու փոխարէն կարող է և շարժական տառեր դնել իրար մօտ, քանի որ նրա նպատակն է առ վանկի երկու հնչիւն ունենալը զննելի կացուցանելը:

Այս վարժութիւնից յետոյ հարկաւոր է գլխի զցել մանուկներին, որ բաղաձայն տառերը տառնց ձայնաւորի օգնութեան հնչել չեն կարող, թէ՝ անձարութիւնից ենք ասում ըւը, զը, դը... Փորձի համար վարժապետն ասում է՝ Երեխեք, ես ինչ որ ասում եմ ը-ով, դուք կարողանում էք միենոյն բառը ասել ասունց ը-ի: Ես հիմա կասեմ մի քանի բառ էլի ը-ով, տեսնեմ կարող էք նըրանցից էլ վերացնել ը-ն և ասել ասանց ը-ի: Լսեցէք, ասում եմ ահա: Եւ ասում է ըւ... Երեխեքը փորձում են և չեն կարողանում ասել ասանց ը-ի: Փորձում են զը, զը, նը հնչիւններից վերացնել ը-ն, չեն կարողանում: Այստեղ առաջ է գալիս բաւական ծիծաղ և զւարձութիւն, որ թոյլ է տալիս ուսուցիչը:

Երբ որ հանդարտում են երեխեքը, ուսուցիչն ասում է, որ զրանք մեր գրերի անուններն են, այն զրերի, որոնք ասանց ը-ի օգնութեան չեն հնչում, բայց իսկապէս զրանց վերջումը ը չըկայ: Եթէ ը-ի տեղ մի ուրիշ տառ ընկնի մօտը, նրան կը

կպչի առանց ը-ի։ Եւ բերում է մի շարք օրինակ երկտառանի վանկեր, որմնք սկսում են բաղաձայնով և վերջանում ձայնաւորով, ինչպիսիք են դա, կա, նա, հա, սա, թի, ձու, լու, բու, գու։ Եւ բացատրում է, թէ ինչպէս՝ գրում ենք դը, ա, և կարդում ոչ թէ դը, այլ՝ դա։ Մրանով սովորեցնում ենք ը-ն վերացնել վանկի միջից էլ ինչպէս վերացնում ենք վերջից։

Ուրեմն,—ասում է ուսուցիչը, —ես որ գրեմ դը, ա, դուք ի՞նչ կըկարդաք։ Պատասխանում են՝ դա։ Ուսուցիչն իր ամեն ասած վանկը գրում է գրատախտակի վրայ։

Ամեն մի ուսուցիչ այս գործողութիւնների ժամանակ՝ հետեւով իր բնազդին՝ կարող է իր ուզած ձևով հասկացնել երեխաներին բանի էռթիւնը, իմ առածն ու նեսալով միայն իբրև օրինակ։ Ես ինքս գործնականի մէջ բառացի կերպով ասածիս պէս չեմ վարւում, այլ ինչպէս թելադրում է ըսպէն, ինչպէս պահանջում է հանգամանքը։ Եթէ երեխէքը հասկացել են իրանց անելիքը, էլ աւելորդ քաշքացի չըպէտք է դիմել։

Երբ երեխէքը գիտեն ը հնչիւնը դեղէկ նաև վանկի միջից՝ այնուհետև շատ կընեցանայ նրանց համար լուծել երեք և չորս գիր ունեցող բառեր։ Հեծութեան համար կարելի է առաջարկել միայանդ բառեր, ինչ պէս—թաղ, խաղ, ճաղ, մաղ, շաղ, չաղ, սաղ, վաղ, տաղ, քաղ, գող, դող, թող, հող, ձող, շող, տող, ցող, փող, քող, բան, թան,

խան, ճան, ջան, ցան, ծէս, կէս, ըուն, տուն, շուն, խամ, ծամ, կամ, ժամ, համ, շամ, ջամ, նամ, բաց, լաց, թաց, կաց, հաց, սուր, ջուր, գուր, մուր, թուր, զուր, լուր, սար, քար, չար, տար, վար, ճար, լար, կար… (խառն) արտ, երգ, գիր, գիմ, թուփ, ծառ, խոտ, կալ, կուտ, հոտ, հատ, ձեղ, ճաշ, նաւ, փուշ, նետ, շուտ, նոր…

Այս վարժութիւնից յետոյ պէտք է ըստուգել, թէ երբ ասում են հը, ա, ցը, թնչպէս են միացնում հնչիւնները, արդեօք շինում են հաց թէ հացը։ Որպէսզի այսպիսի սխալ երբէք տեղի չունենայ՝ պէտք է լուծել տալ նաև այնպիսի բառեր, որոնք սուփորաբար գրում են ը-ով և առանց ը-ի, ինչպիսիք են—նուռ, նուռը, դուռ, դուռը, կուռ, կուռը, փուռ, փուռը, մուկը, մուկը, ձուկ, ձուկը, եղը, եղը, դառ, գառը, մատ, մատը, կաթ, կաթը։

Այս վարժութիւնից յետոյ մանուկների համար պէտք է բոլորովին հասկանալի դառնայ, որ այլ է հը, ա, ցը, որ է՝ հաց, և այլ՝ հը, ա, ցը, ը, որ է՝ հացը։ Քրաւոր պարապմունքի ժամանակ այս բանը աւելի էլ շօսափելի կըդառնայ¹⁾։

Վանկերի բանաւոր լուծումը սրանով էլ

¹⁾ Վանկերը հնչիւնների վերածելիս մանուկները եւը շնում են՝ եը, է, իսկ ո՞ւ ո՞ւ, օ։ Ուսուցիչը պէտք է ասէ, որ նրանց արածն ուղեղ է, բայց գըրանց համար մէկ-մէկ գիր ունինք։ Եւ ցոյց կըտայ ե, ո գրեը։

վերջանում է և սկսում է գրաւոր պարապ-
մունքը իրենց ունեցած դասագրքի վրայ:
Սկզբի ամեն մի դասը նախ պէտք է գրել-
տալ և կարդացնել իրենց գրածը և ապա
կարդացնել դասագրքում տպածը: Մի քանի
դասից յետոյ կարելի է թոյլ տալ, որ աշա-
կերտները արտնագրեն դասերք: Այս ժամա-
նակ էլ պէտք է այն աշակերտներին, որ
կարդալը լաւ չեն իմանում, թոյլ չըտալ, որ
բառերն ամրող գրեն, որ կարող են գրել
տառ տոռ տառ, այլ ստիպել, որ վանկելով
գրեն, քանի որ բառը չըկարդացած՝ ուղիղ
վանկել չեն կարող: Թելագրելիս էլ բագմա-
վանկ բառերը նախ պիտի վանկեն և ապա
սկսեն գրել վանկ-վանկ կամ ամրող:

Սյա նախապատրաստութիւնը մի ամսից
աւելի չըպիտի տեի, իր հետ ունենալով և
միւս առարկաները—երգելը, համբուլը և
գրերի տարերք գրելը։ Մանուկների համար
այնքան պարզած պիտի լինի գրել-կար-
դալու էութիւնը, որ նրանք չըդժւարանան
գրել-կարդալ՝ առանց դիմելու ուրիշի օգ-
նութեան, այլ միայն օգտելով իրանց այբ-
բենարանից¹⁾։

¹⁾ Ով որ այս մասին իմ առաջւայ ասածներին ել կուղի ծանօթ լինել, կարող է կարդալ «Վարժարան» ամսագրում 1882 № 4 և 1883 № 8; Կայ մի համ ել առանձին բրոշիւր «Ռւսութեա մայքենի լիցիի, ռւսութեա տիչների համար»: Մաիւսում է Զաքարիա Գրիգորիա-նի գըտախանութում:

- | | | | | | |
|-----|---------------------|--|---------------------|---|------|
| 24. | Սերմ և ցանք, Գ. | Ղազարեանի | . | . | — 25 |
| 25. | Գիլորը, պատկերազարդ | մանկական գիրք
Յովհ. Թումանեանցի | . | . | — 20 |
| 26. | Ժողովրդական | դպրոցների մեթոդիկա, Թու- | . | . | |
| | գէի, | գերմ. փոխ. Յ. Տէր. Միբարեանի | . | . | 1 50 |
| 27. | Հայկական | փայելչազբութիւն և գեղագրու-
թիւն, Գ. | Լեռնեանի, տետրակ Ա. | . | — 40 |
| 28. | » | » | Բ. | . | — 40 |
| 29. | » | » | Գ. | . | — 40 |
| 30. | Ընդհանուր | աշխարհագրութիւն սպառուած | . | . | |
| 31. | Սենօրոս, համասու | պատմութիւն քաղա-
քակրթութեան ամենահին ժամանակնե-
րից մինչև մեր օրերը, Գրանս. թարգմ.
Մ. Նուպարեան | . | . | 1 — |
| 32. | Հայոց եկեղեցական | տարրական դպրոցների
ուսումնական ծրագրը. Խմբագր. Սիր.
Տիգրանեանի | . | . | — 40 |
| 33. | Կլէյն. | Գործնական կաթնատնակութիւն
48 նկարով, թարգմ. Ա. Միթթարեան | . | . | — 50 |
| 34. | Բոկլ. | Անգլիացի քաղաքակրթութեան պատ-
մութիւնը, թարգմ. Վարդգէս Աղանեանց. | . | . | — 75 |
| 35. | Լուսկիչ. | Նախամարդու կեանքը, պատկե-
րազարդ թարգմ. Յ. Թագէսսեան | . | . | — 25 |
| 36. | Ընդհ. | աշխարհագրութեան գասազիրք. ա-
ռաջին—բնական մաս 85 նկարով, Լ. Բա-
րյայեանի | . | . | — 60 |
| 37. | Ալիլ Լուփա. | Սօցիոլոգիա. Pessimist. | . | . | — 60 |
| 38. | Փոթորկից առաջ, Վ. | Արիս. Յովհաննիս-
եանի | . | . | 1 — |
| 39. | Գրաքառի | հոլովումը և խոհարհումը Ստ.
Մալխասեանի | . | . | — 25 |
| 40. | Մովսիսի | Մորենացւոյ պատմութիւն Հայոց. | . | . | 1 — |
| 41. | Մայсли | старого слъжаки. Шеварднадзе | . | . | — 25 |
| 42. | Դասագիրք | բնոհանուր պատմութեան Վի-
նօրգարագովի, մասն Բ. թարգմ. Գ. Խաժակ. | . | . | 1 — |
| 43. | Այլազեան Ա. | Անիի կուռումը | . | . | 1 — |
| 44. | Ժողովրդական | թատրոն, Արաքսեանի, Ժողո-
վածու մասն Ա., բովանդակութիւն. 1. Թան-
գագին համբոյը. 2. Յանկալին և անսպասե-
լին. 3. Լուսանկարչութեան պատուհաս. 4.
Բարելնահան խառնակութիւն. 5. Աւետիս | . | . | |

աղա. 6. Շփոթուած ծառայ	1 —
45. Ժողովրդական թատրօն. Արաքսեանի, Ժողովածու մասն Բ., ըովանդակութիւն: 1. Գող.	
2. Պաշտօնս է խոմփալ. 3. Զոքանչի գալուստը. 4. Կրէշինսկի իւրկայով. 5. Սիրահարուած մայիօր. 6. Արհան զէպք.	1 —
46. Հայոց գրականութեան պատմութիւն Վ. Փափաղեանի	1 25
47. Երիտասարդութեան մեղքեր, Համմանդի, թարգմ. Արայ Արայեան.	1 —
48. Շարլ Մէրէ, Հիղբա. գրամա, 5 արար. թարգմ. Վ. Փափաղեանի	50
49. Դասագիրք ընդհ. պատմութեան, Վինօգրագովի, մասն գ. թարգմ. Գ. Խաժակ.	1 —
50. Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի և Ա. Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ Բ. Իշխանեանի	1 —
51. Կենապրութիւն «Գուտտենբերգի» (մամուլի տակ)	
52. Հայերէն գրագիտութիւն ուսուցանելու բանաւոր նախապատրաստութեան մասին ուսուցիչների համար Ղ. Աղայեանի	10
53. Աղա-Նեկրի, Բանաստեղծութիւններ, թարգմ. Յ. Յակոբեանի	50
54. Դասընկեր, Ռաշմանեանի և Զիլինդարեանի Ա. մաս. — 50	
55. » » » Բ. մաս. — 60	
66. Հայ գրողներ Ա. մաս, կազմ. Ահարոնեան, Աղայեան, Թումանեան և Փափաղեան	2 —
57. Հայ գրողներ Բ. մաս, կազմ. Աղայեան, Թումանեան և Փափաղեան	2 —

«Ազգային գրադարան



NL0238822

Դիմել Կнигоиздательство и книжный магазинъ
„Гуттенберг“ Г. И. Галустяну. Тифлисъ.

Tiflis, Librairie «Gouttenberg», G. Galoustian.